

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2021 թվականի N - Ն

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ
ՌԱԶՄԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկավարվելով <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասով և <<Պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայտարարել պահեստազորի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ՝ երեք ամիս ժամկետով՝ 2021 թվականի օգոստոսի 25-ից մինչև նոյեմբերի 25-ը:
2. Վարժական հավաքներին ներգրավել ընդհանուր մինչև 2169 քաղաքացու, որոնցից 1164-ը՝ շարքային կազմի, 254-ը՝ ենթասպայական կազմի, 751-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ՝ մոտոհրաձգային, հրթիռահրետանային, կապի, հետախուզական, ինժեներական մասնագիտություններով:
3. Վարժական հավաքների ապահովման համար՝ երեք ամիս ժամկետով՝ 2021 թվականի օգոստոսի 25-ից մինչև նոյեմբերի 25-ը, ռազմատրանսպորտային պարտականություններ ունեցող մարմիններից ներգրավել ընդհանուր մինչև 110 միավոր տրանսպորտային միջոց՝ համաձայն հավելվածի:
4. Սահմանել, որ վարժական հավաքները հայտարարվում են պահեստազորայինների ռազմական ունակությունների

կատարելագործման և վերապատրաստման, նրանց հետ կնքված պայմանագրի համաձայն ըստ անհրաժեշտության մարտական հերթապահության ներգրավման նպատակով:

5. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝

ապահովել վարժական հավաքներին ներգրավվող պահեստազորայիների բուժհետազոտումը ըստ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումների:

6. Թույլատրել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ վարժական հավաքներ անցկացման ժամկետում անհրաժեշտությունը վերանայու դեպքում վարժական հավաքներին ներգրավված քաղաքացիներին ժամկետից շուտ արձակել պահեստազոր, իսկ ներգրավված տրանսպորտային միջոցները վերադարձնել ռազմատրանսպորտային պարտականություններ ունեցող համապատասխան մարմիններին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2021թ.

Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
----- -ի N - Ն որոշման

ՑԱԼԿ

ՌԱԶՄԱՏՐԱՆՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՑ ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻՆ ՆԵՐԳՐԱՎԿՈՂ ՏՐԱՆՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

| Հ/հ | Տրանսպորտային միջոցի տեսակը | Քանակը (միավոր) | Ծանոթ |
|-----|---------------------------------------|--------------------|-------|
| 1. | Կողավոր (անձնակազմ տեղափոխելու համար) | 50 | |
| 2. | Կողավոր | 19 | |
| 3. | Կողավոր (մինչև 5 տոննա) | 7 | |
| 4. | Կողավոր (ոչ պակաս 5 տոննայից) | 20 | |
| 5. | Ուղևորաբեռնատար բարձր անցանելիությամբ | 1 | |
| 6. | Քարշակ | 6 | |
| 7. | Ավտոգիստեռն | 1 | |
| 8. | Ավտոմառնելիքալցավորիչ | 2 | |
| 9. | Ջրի ավտոգիստեռն | 1 | |
| 10. | Սանիտարական | 3 | |
| | Ընդամենը | 110 | |